ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/34

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1200-2021 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 27.01.2021թ. թիվ ՊՆ//334-2021 գրության հիման վրա 01.02.2021թ. թիվ 26/26/1200-2021 գրությամբ նախաձեռնել է «Պահապան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Պահապան» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«Պահապան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/34 ընթացակարգի շրջանակներում 12.02.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.01.2021թ. թիվ ՊՆ//334-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև կնքված գնման պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է «Պահապան» ՍՊԸ-ի հետ 06.04.2018թ. կնքված N ԲՄԾՁԲ-7/5-5 ծածկագրով գնման պայմանգրին կից N 3 համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ համաձայնագրի լուծման վերաբերյալ գրությունը 25.01.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/34 ընթացակարգի շրջանակներում 12.02.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/34 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/34 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 06.04.2018թ. կնքվել է «ԲՄԾՁԲ-7/5-5» ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝

ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պայմանագրի նույն կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 04.06.2020թ. կնքվել է 06.04.2018թ. կնքված թիվ «ԲՄԾՁԲ-7/5-5» պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին N 3 Համաձայնագիրը:

4. «Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 22.01.2021թ. թիվ ՆՏԱ-195 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 06.04.2018թ. կնքված թիվ ԲՄԾՁԲ-7/5-5 գնման պայմանագրին կից 04.06.2020թ. կնքված թիվ 3 համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում պետք է մատուցեր դերձակի ծառայություններ՝ 18000 լ-կ /կոստյում՝ բամբակյա, կեպիով/, որից 10290 լ-կ /կոստյում՝ բամբակյա, կեպիով/ չի մատուցել:

Հիմք ընդունելով թիվ ԲՄԾՁԲ-7/5-5 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը վերը նշված ծառայությունների մասով»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 25.01.2021թ հրապարակվել է Համաձայնագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1200-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.01.2021թ. թիվ ՊՆ//334-2021 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Պայմանագրի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:</u>*** Պայմանագրով սահմանված ծառայության մատուցումը նախատեսվում է իրականացնել 2018-2020թթ. համաձայնագրերի կնքման միջոցով:

Պայմանագրի 7-րդ կետի 7.5-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:</u>***

Պայմանագրի 7-րդ կետի 7.9-րդ ենթակետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով ***<u>պայմանագիրն</u> ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին*** ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ ***<u>Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը</u>***, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 06.04.2018թ. կնքվել է «ԲՄԾՁԲ-7/5-5» ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի նույն կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 04.06.2020թ. կնքվել է 06.04.2018թ. կնքված թիվ «ԲՄԾՁԲ-7/5-5» պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին N 3 Համաձայնագիրը:

«Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 22.01.2021թ. թիվ ՆՏԱ-195 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 06.04.2018թ. կնքված թիվ ԲՄԾՁԲ-7/5-5 գնման պայմանագրին կից 04.06.2020թ. կնքված թիվ 3 համաձայնագրի շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում

պետք է մատուցեր դերձակի ծառայություններ՝ 18000 լ-կ /կոստյում՝ բամբակյա, կեպիով/, որից 10290 լ-կ /կոստյում՝ բամբակյա, կեպիով/ չի մատուցել:

Հիմք ընդունելով թիվ ԲՄԾՁԲ-7/5-5 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջները՝ ***<u>ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը վերը նշված ծառայությունների մասով</u>***»:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 25.01.2021թ հրապարակվել է Համաձայնագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 ենթակետի բ) պարբերության պահանջը, միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը, որի վերաբերյալ ծանուցումը 25.01.2020թ. հրապարակել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Պայմանագրի 2.1.3 ենթակետով սահմանված է Պատվիրատուի կողմից **<u>Պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունքը</u>**, մինչդեռ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծել է 06.04.2018թ. կնքված թիվ «ԲՄԾՁԲ-7/5-5» պայմանագրի հիման վրա Կողմերի միջև կնքված Համաձայնագիրը, որը, համաձայն Պայմանագրի 7-րդ կետի 7.5-րդ ենթակետի, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Այսպիսով՝ գտնում եմ, որ Համաձայնագրի լուծման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1200-2021 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**